

Կ-234<sup>1</sup>-22.12.2017-ՏՏԳԲ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ  
ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի մայիսի 3-ի ՀՕ-88-Ն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «բնապահպանական տեսչական մարմնի» բառերը փոխարինել «բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի փետրվարի 8-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված Կ-234 -22.12.2017-ՏՏԳԲ-011/0 «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», Կ-234<sup>1</sup> -22.12.2017-ՏՏԳԲ-011/0, «Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», Կ-234<sup>2</sup> -22.12.2017-ՏՏԳԲ-011/0, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», Կ-234<sup>3</sup> -22.12.2017-ՏՏԳԲ-011/0 «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

№	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1. «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 1-ին կետ	2-րդ հոդվածի 1-ին մասում «ընդերքաօգտագործման» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «համար» բառը՝ նկատի ունենալով «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի դրույթները:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն

2.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
3.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածում «տեղակալին» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերով» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
4.	ՀՀ կառավարություն	11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախատեսվող փոփոխությունները չեն համապատասխանում «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի գործող տեսքին: /Հիշյալ կետում փոփոխություններ են կատարվել 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-270-Ն օրենքով/:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
2. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
			«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության		

			օրենքի նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:		
<b>3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</b>					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	2-րդ հոդվածում «տեքստում» բառից հետո «վերահսկողություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «հսկողություն» բառով՝ նկատի ունենալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242 <sup>2</sup> -րդ հոդվածի դրույթները	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242 <sup>2</sup> -րդ հոդվածի տեքստում ամրագրված է «վերահսկողություն» բառը	
<b>4. «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</b>					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն